

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 31

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐԴԱՆ ՍԱՖԱՐՅԱՆԸ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Կ. Շահազիզյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Շուխյանը, Վ. Մկրտչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի 2019թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 3-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Սահակյան/*

6. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. N 37-Ա և N 38-Ա, 13.09.2019թ. N 44-Ա և N 45-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

7. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

10. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:**

Լ Ա Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություն կատարելու Աշտարակ համայնքի 2019թ. տարեկան բյուջեում:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ բյուջեի ծախսային մասում առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով է կատարվում վերը նշված փոփոխությունը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ա Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի 2019թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Հարցը զեկուցեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություն կատարելու Աշտարակ համայնքի 2019թ. տարեկան բյուջեում:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ զեկուցվող հարցը ուղիղ կապ ունի նախորդ հարցի հետ և բյուջեի ծախսային մասում առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով է կատարվում վերը նշված փոփոխությունը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի տարածքում գտնվող որոշ գույքերի սեփականատերերի:

Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 3-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություն կատարելու Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N3-Ն որոշման մեջ:

Զեկուցողը նշեց, որ նշված փոփոխությամբ ավագանու նախորդ որոշումը համապատասխանեցվում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. N 37-Ա և N 38-Ա, 13.09.2019թ. N 44-Ա և N 45-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին

Հաջորդ հարցը ներկայացրեց քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը և առաջարկեց ուժը կորցրած ճանաչել 22.08.2019թ. N 37-Ա և N 38-Ա, 13.09.2019թ. N 44-Ա և N 45-Ա որոշումները:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանի և Ա. Մնացականյանի կողմից:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական

տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Ձեկուցողը նշեց, որ նախկինում սխալ քարտեզագրման արդյունքում նշված հողատարածքները հաշվառվել են անհայտ քաղաքացու սեփականություն, սակայն դրանք իրականում հանդիսանում են համայնքային սեփականություն:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Կ. Շահազիզյանը և Վ. Մկրտչյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ԱՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տրալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, կառուցապատման իրավունքով քաղաքացիներին տրամադրելու:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը և Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին Ա. Մնացականյանի կողմից:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ԱՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տրալու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասերը, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ԱՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տրալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել Հայաստանի

Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասը, որի իրադրության հատակագիծը կցված է, մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի սեպտեմբերի 25-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

**ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**

**ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**

**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՁՅԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝**

**Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**